

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ

ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ

ΕΝΙΑΙΕΣ ΤΕΛΙΚΕΣ ΑΠΟΛΥΤΗΡΙΕΣ ΓΡΑΠΤΕΣ ΕΞΕΤΑΣΕΙΣ 2025-2026

Γ΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ: 21 Μαΐου 2026

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ

Α΄ ΣΕΙΡΑ

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Γ012

ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΕΣ ΛΥΣΕΙΣ

ΟΙ ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΕΣ ΛΥΣΕΙΣ ΑΠΟΤΕΛΟΥΝΤΑΙ ΑΠΟ ΟΚΤΩ (8) ΣΕΛΙΔΕΣ

**1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
(30 նիշ)**

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ գրութիւնը եւ պատասխանեցէք հարցումներուն:

<< Էրեբունի Երեւան >>



Երեւան դարձած իմ Էրեբունի,

Դու մեր սոր Դուին մեր սոր Անի.

Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,

Մեր քարէ կարօտ, մեր սարէ նազանք:

Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում,

Անկատար տենչեր ունենք դեռ շատ:

Մեր կանչն առանց քեզ իզուր կը կորչի,

Առանց քեզ մեր տաք տենչն էլ կը սառչի:

Կեանքում ամէն սեր լինում է տարբեր,

Իսկ մենք բոլորս ենք քեզմով հարբել.

Տաք է սերը մեր՝ շէկ քարերիդ պէս,

Չին է սերը մեր ձիգ դարերիդ պէս:

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի.
Քո Մասիս հորով, քո Արաքս մօրով,
Մեծանաս դարով, Երեւան:

<<Էրեբունի Երեւան>> Պարոյր Սեւակ



Ա- Բանաստեղծը Երեւանին հետ կապուած ի՞նչ զգացումներ կ'արտայայտէ, առաջին չորս տողերուն մէջ: Գտէք եւ գրէցէք երեք (3) հատ: Ապա ընտրեցէք երկուքը եւ բացատրեցէք թէ դուք ինչպէ՞ս կը հասկնաք : /5 նիշ/

Ա- - Բանաստեղծը կը յիշէ հայոց հին ու պատմական Էրեբունին, որ դարձած է Երեւան:

- Կը ներկայացնէ որպէս փոքրիկ այս հողի՝ մեծ երազանքը հայոց:

- Աշխարհասփիւռ հայութեան կարօտը կը կապէ այս քաղաքին հետ:

- Ապա տալ ինքնուրոյն պատասխան:

Բ- Երեւանին հին եւ միաժամանակ նոր ըլլալը ի՞նչ խօսքերով կը ներկայացնէ բանաստեղծը: Գրէցէք երկու (2) խօսք իրմէ այս միտքը հաստատող: Դուք համաձայն եք բանաստեղծին գաղափարին: Իսկ ան ինչպիսի՞ մաղթանք ունի Երեւանին: Գրէցէք իր բառերը: Ապա բացատրեցէք ձեր ըմբռնումով իր խօսքը: /5 նիշ/

Բ- - Երեւանին հին եւ միաժամանակ նոր ըլլալը կ'արտայայտէ այսպէս՝

- Երեւան դարձած իմ Երեբունի.
- Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի:
- Ապա տալ անձնական կարծիք:
- Կը մաղթէ որ Երեւանը բարգաւաճի ու զօրանայ:
- Մեծանաս դարով Երեւան:
- Տալ անձնական բացատրութիւն:

Գ- Բանաստեղծը ինչպէ՛ս կ'արտայայտէ իր սերը Երեւանի հանդէպ:
Գտէք բանաստեղծութենէն եւ գրեցէք չորս (4) տարբեր խօսքեր այս մասին:
Չամաճա՛յն էք իր հետ: Ձեր ընտրած խօսքերէն մէկը (1) բացատրեցէք:
/ 8 նիշ /

Գ- - Չայոց կանչն ու տենչը կը կապէ Երեւանի հետ:
- Առանց քեզ մեր տաք տենչն էլ կը սառչի:
- Կեանքում ամէն սեր լինում է տարբեր:
- Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել:
- Չին է սերը մեր ձիգ դարերիդ պէս:
- Ապա տալ իքնուրոյն պատասխան:

Դ- Ձեր կարծիքով այս բանաստեղծութիւնը ինչու՞ սիրուած է Չայրենիքի թէ Սփիւռքի մէջ: Գրեցէք ձեր պատճառները եւ բացատրեցէք այս բանաստեղծութեան մնայուն արժէքը: /80 բառի շուրջ/ /10 նիշ/

Դ- - Ինքնուրոյն պատասխան

Ե- Գտեք եւ գրեցեք այս բառերուն հոմանիշը բանաստեղծութեան մեջէն:
/ 2 նիշ/

Փափաք	
Ապարդիւն	

Ե- Տենչ
Իգուր

2 ՆԻԻԹԻ ԸՄԲՈՒՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ / 30 նիշ/

Ոչադրուութեամբ կարդացեք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցեք հարցումներուն:



<<Մտաւորականը>>

Արուեստագէտներ, գրողներ եւ գիտնականներ կան , որոնք իրենց անձով եւ կեանքով շատ աւելի կ'արժեն քան արտադրուած գործը: Այն յորդահոս աղբիւրներուն նման, որոնց յարատեւ բխումը փոխանակ յուռթի դաշտեր արգասաւորելու, ընդարձակ կարելիութիւններ կը ցուցադրէ եւ երգի ու շարժումի հմայիչ պատկերներ կը ստեղծէ՝ ձորերն ի վար իր վազքին մէջ: Աղբալեանը ճանչցող բոլոր ժամանակակիցները կրնան վկայել, որ պայծառ իմացականութեան հրաշալի ժայթք մըն էր ան:

Աղբալեան փորձած է գրական քննադատութիւն, բանասիրական եւ լեզուական ուսումնասիրութիւններ, քաղաքական եւ կուսակցական տեսութիւններ, պատմական հետազոտութիւններ, եւայլն: Յանուցիր այդ աշխատանքներու խառնուրդին մէջէն եթէ փորձենք իր բուն դիմագիծը ճշդել՝ ո՞ր տարազը ամենէն աւելի պիտի պատշաճէր իր տաղանդին: Բոլոր ճիւղերուն ալ տիրապետած է գրեթէ հաւասար ձեռնհասութեամբ: Բայց ո՞րն էր իր կոչումին հիմնական ուղին, որմէ կամովին կամ ակամայ շեղեցաւ ան՝ ընդգրկելու համար գրական կեանքի այսքան ընդարձակ հորիզոններ:

Ինծի կը թուի թէ Ն. Աղբալեան ոչ թէ շեղում կատարած է, այլ հաւատարմօրէն սպասարկած իր ներքին զգացումներուն: Եթէ անպայման տարագ մը պետք է գինք բնորոշելու, **մտաւորական** որակումը, ամենէն ազնուական ու խորիմաստ առումով, լաւագոյնս պիտի յարմարէր իր խառնուածքին: Արդարեւ, Աղբալեան հզօր իմացականութեամբ օժտուած, համապարփակ հետաքրքրութիւններով մեծ մտաւորական մըն էր, որքան մտքի, նոյնքան եւ զգացումներու մարդ մը նոյն ատեն, որ մշտարթուն ջերմութեամբ գիտէր բաբախել կեանքի երեւոյթներուն առջեւ: Օր մը, Լ. Շանթի գրականութեան նուիրուած դասախօսութեան մը ընթացքին հետեւեալ ձեւով սահմանեց մտաւորականը. - << Բուն իմաստով մտաւորականը նա է, որ աշխատում է հանրային եւ իմաստական կեանքի խնդիրներ դնել, պարզաբանել եւ լուծել>>: Աղբալեան կատարելութիւն մըն էր այս տեսակետէն:

Աղբալեանի գրչին ու խօսքին բոլոր նուաճումները իրագործուած են բարձրագոյն մտաւորականի ապրումներով: Եղած է քննադատ, տեսաբան, բանասէր եւ լեզուագէտ, որովհետեւ արուեստը, քաղաքականութիւնը, պատմութիւնն ու լեզուն, հանրային եւ իմաստական շարժումի զանազան երեսներն են, կապակից ու զուգընթաց երեւոյթները, որոնք տեւաբար եւ յաջորդական փոփոխութիւններով կ'իյնան իր հոգեկան լուսարձակին տակ:

Պարկեշտ մտաւորական մըն էր Ն. Աղբալեան: Լաւագոյնին երազը կեանքին նպատակը եղած էր միշտ եւ դառն ափսոսանքով լաւն ալ զոհած էր լաւագոյնին հասնելու դժուարին ճամբուն վրայ:

<<Մտաւորականը>> Մուշեղ Իշխան



Ա- Տուեալ գրութեան համար գրեցէք երեք (3) տարբեր վերնագիրներ:
/ 3 նիշ/

Ա- -Ինքնուրոյն պատասխան

Բ- Գրութեան սկիզբը հեղինակը ի՞նչ կը գրէ անձի եւ անոր արտադրած գործի համեմատութեան մասին: Ինչպէ՞ս կը կապէ այդ գաղափարը Աղբալեանի հետ եւ ի՞նչ կ'ըսէ իր մասին: / 5 նիշ/

Բ- - Յեղինակը կը գրէ թէ արուեստագետներ, գրողներ եւ գիտնականներ կան, որոնք իրենց անձով ու կեանքով շատ ակտիվ կ'արժեն քան արտադրուած գործը:

- Աղբալեանի հետ կապելով կ'ըսէ թէ բոլոր ժամանակակիցները կրնան վկայել, որ պայծառ իմացականութեան հրաշալի ժայթք մըն էր ան:

Գ- Ինչպիսի՞ աշխատանքներ կատարած է Աղբալեան: Թուեցէք այս գրութենէն ստացած ձեր տեղեկութեան հիման վրայ: Ըստ գրութեան հեղինակին , Աղբալեան ո՞ր ճիւղին տիրապետած է ակտիվ շատ: /6 նիշ/

Գ- - Աղբալեան կատարած է գրական քննադատութիւն, բանասիրական եւ լեզուական ուսումնասիրութիւններ, քաղաքական եւ կուսակցական տեսութիւններ, պատմական հետազոտութիւններ:

- Ըստ հեղինակին բոլոր ճիւղերուն տիրապետած է ան, գրեթէ հաւասար ձեռնհասութեամբ:

Դ- Աղբալեանի կոչումին հետ կապուած, ի՞նչ հարցում կը կատարէ այս գրութեան հեղինակը: Ապա ինչպէ՞ս կը պատասխանէ ան: / 6 նիշ/

Դ- - Զետեւեալ հարցը կը դնէ հեղինակը՝ ո՞րն էր իր կոչումին հիմնական ուղին:

- Կը գրէ թէ Աղբալեանի համար մտաւորական որակումը, ամենէն ազնուական եւ խորիմաստ առումով լաւագոյնս պիտի յարմարէր իր խառնուածքին:

Ե- Վերջին երկու պարբերութիւններուն մէջ Աղբալեանին ի՞նչ յատկանիշերով կը ներկայացնէ: Դուք կարելոր կը գտնէ՞ք տուեալ յատկանիշերը մտաւորականի մը համար: Ինչու՞: Իսկ արուեստի, քաղաքականութեան, պատմութեան եւ լեզուի մասին ի՞նչ կը գրէ: / Շուրջ 80 բառ/ /10 նիշ/

Ե- - Զետեւեալ յատկանիշերով կը ներկայացնէ՝

Զգօր իմացականութեամբ, համապարփակ հետաքրքրութիւններով մեծ մտաւորական:

- Որքան մտքի, նոյնքան եւ զգացումներու մարդ մը նոյն ատեն:

- Զննադատ, տեսաբան, բանասէր, լեզուագէտ.

- Ապա գրել անձնական կարծիք:

- Կը գրէ թէ արուեստը, քաղաքականութիւնը, պատմութիւնը եւ լեզուն հանրային եւ իմաստական շարժումի զանազան մասերն են, կապուած եւ զուգընթաց երեւոյթները, որոնք իր ուշադրութեան կ'արժանանան:

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)

Սփիւռքահայ աշակերտ որպէս, դուք ունիք կարելոր դերակատարութիւն սորվելով մայրենի լեզուն՝ պահպանելու ինքնութիւնը: Ձեր մնայուն կապը կարելոր է նաեւ հայրենիքի հետ:

Ի՞նչ գաղափարներ եւ առաջարկներ կրնաք ներկայացնել, որոնց իրագործումը կրնայ աշխարհասփիւռ հայ աշակերտներուն առաւել եւս մօտեցնել Հայաստանին եւ ձեզի տարեկից հայրենի աշակերտութեան:

Իւրաքանչիւր գաղափարի եւ առաջարկի պարագային բացատրեցէք անոր կարելորութիւնը: /350 բառ/

3 Տուեալ սիւթով զարգացնել ինքնուրոյն մտածումներ եւ զգացումներ:



**Ուշադրութիւն դարձուցէք ձեր ողջագրութեան եւ ձեռագիրին:
ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ**

ΤΕΛΟΣ ΠΡΟΤΕΙΝΟΜΕΝΩΝ ΛΥΣΕΩΝ